ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 156
14 ապրիլի 2023 թվականի N - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1313-Լ որոշման 16-րդ կետը,

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրով մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրով մոնիթորինգ իրականացնելու արդյունքում կազմվող արձանագրության ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Հաստատել մոնիթորինգի իրականացման ենթակա ցանքատարածությունների նվազագույն քանակը՝ ըստ համայնքների, համաձայն հավելված N 3-ի:

4. Աշխատանքային խմբին՝

ա/ մինչև 2023 թվականի մայիսի 1-ն ապահովել ընդգրկված շահառուների առնվազն տասնհինգ տոկոսի ընտրանքային մոնիթորինգի իրականացումն, այդ թվում՝ աշնանացան ցորենի ցանքատարածքների ու այլ փաստաթղթերի ուսումնասիրություն և արձագրության կազմում:

բ/ մինչև 2023 թվականի մայիսի 10-ն ամփոփել իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ներկայացնել մարզպետին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

5. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել հավելվածով նշված քաղաքացիական ծառայողների գործուղման ծախսերը:

14.04.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2023թ. ապրիլի 14
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. ապրիլի 14-ի N 256-Լ որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրով մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ն. Ղազարյան - Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Ռ. Կոստանդյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Է. Բունիաթյան – Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Հ. Հակոբյան – Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Գ. Դավթյան _ Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Ս. Երեմյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Փարսադանյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Ստեփանյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ

14.04.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. ապրիլի 14-ի N 156-Ա որոշման

Արձանագրություն

ՀՀ կառավարության 11 օգոստոսի 2022 թվականի N1313-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցման ծրագրի ՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի

Համայնք _____, Բնակավայր _____

Շահառու _____, Հեռ. _____

Ցանքատարածության մակերեսը _____ հա

Հողամասի վկայականի և/կամ տեղեկանքի և/կամ վարձակալության պայմանագրի համար(ներ)

_____

_____

Ցանքսը կատարված է՝ (համապատասխան վանդակում կատարել v-աձև գրառում)

☐ հավաստագրված սերմացուով

☐ չհավաստագրված սերմացուով

Ցորենի սերմերը ծլել են՝ (համապատասխան վանդակում կատարել v-աձև գրառում)

☐ Այո

☐ Ոչ

Մոնիթորինգի եզրակացությունը՝ (համապատասխան վանդակում կատարել v-աձև գրառում)

☐ Դրական

☐ Բացասական

Շահառու (Անուն, Ազգանուն, Հայրանուն)

_____

Ստորագրություն

Հանձնաժողովի նախագահ _____ Ն.Ղազարյան

Հանձնաժողովի անդամներ _____ Ռ. Կոստանդյան

_____ Է. Բունաթյան

_____ Հ. Հակոբյան

_____ Գ. Դավթյան

_____ Ս. Երեմյան

_____ Կ. Փարսադանյան

_____ Մ. Ստեփանյան

14.04.2023

X _____

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**

Հավելված N 3
Սյունիքի մարզպետի
2023թ. ապրիլի 14-ի N 156-Կ որոշման

ՑԱՆԿ

մոնիթորինգի իրականացման ենթակա ցանքատարածությունների նվազագույն քանակը՝ ըստ համայնքների

ՀԱՄԱՅՆՔ	ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՆԹԱԿԱ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ
Կապան	388	58
Գորիս	635	95
Սիսիան	843	126
Տեղ	787	118
Տաթև	558	83

14.04.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**